

Կ Ա Ր Ծ Ի Ք

Ռեզա Մոհամմադի Բարաթի «Ռիսկերի գնահատման հիմնախնդիրները նախագծերի կառավարման գործընթացում (Թեհրանի քաղաքապետարանի օրինակով)» թեմայով Ը 00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Հերազդության թեմայի արդիականությունը

Մունիցիպալ համակարգում իրականացվող նախագծերի ռիսկերը բազմաբնույթ ու բազմաշերտ են, ուստի դրանց ճանաչումից հետո անհրաժեշտություն է առաջանում նախևառաջ դրանք խմբավորելու և դասակարգելու ըստ կառավարման առաջնահերթությունների: Որից հետո, կառավարումը իր առջև խնդիր է դնում նախագծային ռիսկերի կանխարգելման արդյունավետ ուղիների իրագործմանը, քանի որ նախագծերի իրականացման ռիսկերը ոչ միայն ֆինանսական, այլև ոչ ֆինանսական են (որակյալ աշխատուժի ներգրավում, գործընկերային վստահության աստիճանի ապահովում, հանրային պահանջմունքներին ուղղված որակների ապահովում և այլն): Հետևաբար, մունիցիպալ համակարգում իրականացվող նախագծերին առնչվող ռիսկերի կառավարումը պահանջվում է առանձնահատուկ մոտեցում, կապված տվյալների հավաքագրման գործիքակազմի ընտրության, հավանական կորուստների չափայնության և գնահատումների, ինչպես նաև նախագծերի իրագործման վերջնարդյունքների ամբողջականության ապահովման հետ:

Այնուհանդերձ, Թեհրան քաղաքի մունիցիպալ համակարգում իրականացվող նախագծերի կառավարման այնպիսի հարցեր, ինչպիսիք են ըստ կառավարման

առաջնահերթության ռիսկերի վարկանիշավորումն ու դասակարգումը, կանխարգելումն ու շահառուներին ուղղված հաշվետվողականությունն դեռևս չեն մեկնաբանվել և վերլուծվել հետազոտողների աշխատություններում, որով կարևորում ենք հետազոտության թեմայի արդիականությունը:

***Արենախոսության հիմնական բովանդակությունը,
արժանիքները, գիտական նորույթը և կիրառական
նշանակությունը***

Հետազոտության նպատակն է Թեհրանի մունիցիպալ համակարգում իրականացվող նախագծերին առնչվող ռիսկերի կառավարման գործիքակազմի բարելավման ուղիների առաջադրումը և դրա վրա նախագծերի կառավարման ռիսկերի մեթոդաբանության մշակումը: Այս առումով առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Թեհրանի մունիցիպալ համակարգում գործող նախագծերի կառավարման շահառուների շրջանում իրականացնել հարցումներ և հավաքագրված տեղեկատվության հիման վրա բացահայտել ծրագրերի իրագործման ռիսկերը,
- գնահատել Թեհրանի քաղաքապետորանում իրականացվող նախագծերի կառավարման ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը և բացահայտել դրանց կանխարգելիչ գործառույթները կառավարման ստորին, միջին և բարձր օղակներում,
- վիճակագրական հատուկ մեթոդներով մշակել հարցումների արդյունքում հավաքագրված տեղեկատվությունը և դրա հիման վրա որոշել նախագծերի իրագործման ռիսկերի կառավարման առաջնահերթությունները,
- կազմել մունիցիպալ համակարգի ենթակառուցվածքների ընդլայնման նախագծերի իրականացման ռիսկերի վարկանիշավորում՝ ըստ դրանց կառավարման գործառույթների նշանակության,

- մունիցիպալ ծրագրային կառավարման առանձնահատկությունների հիման վրա առաջարկել ռիսկերի կանխարգելման գործողությունների աստիճանակարգ,
- առաջարկել մունիցիպալ համակարգում իրականացվող ենթակառուցվածքների ընդլայնման նախագծերին առնչվող ռիսկերի կառավարման արդյունքների հաշվետվողականության համակարգ,
- նախագծերի կառավարման արդյունքների հաշվետվողականության կազմակերպման հիման վրա նպաստել արտաքին և ներքին շահառուներին ռիսկերի մասնակցային կառավարման գործընթացին մասնակցությանը և վերջիններիս կողմից գործընկերային հիմնավոր կառավարչական որոշումների կայացմանը:

Ատենախոսության առաջին **«Ռիսկերի գործոնները և նախագծերի կառավարումը»** գլխում քննարկվել են «ճարտարագիտություն-գնումներ-շինարարություն» շղթայի գործունեության առանձնահատկությունները նախագծերի կառավարման համատեքստում: Հիմնավորվել է, որ կապալառուն գործելու ավելի մեծ ազատություն ունենա կիրառվող տեխնիկայի և սարքավորումների ընտրության հարցում և առանձնահատուկ կախվածություն չունենա այլոց գործողություններից և նրանց ժամանակացույցի պլանից: «Ժամանակը» առանձնահատուկ նշանակություն ունի այս տեսակի պայմանագրերում, և կողմերը պարտավոր են դրան հավատարիմ մնալ՝ ստանձնած պարտավորություններին համապատասխան: Հետևաբար, ծրագրի յուրաքանչյուր մակարդակում պետք է քննարկվեն միայն կարևոր և էական դեպքերը, որպեսզի կանխվեն ծրագրի իրականացման գործընթացի հետաձգման ռիսկերը:

Ատենախոսության երկրորդ **«Ռիսկերի ճանաչման մարտահարավերները EPC նախագծերի իրականացման ծախսատարության իրականացման շրջանակում»** գլխում իրականացվել է նախագծերի կառավարման ռիսկերին առնչվող հարցումների տեղեկատվության վերլուծություն և մշակում: Հիմնական նպատակ է դրվել

բացահայտելու և գնահատելու Թեհրանի քաղաքապետորանում իրականացվող ենթակառուցվածքային բարելավումների ծրագրերի ռիսկերն ու մարտահրավերները, ինչպես նաև տրամադրելու EPC նախագծերի արժեքի և ժամկետների կառավարչական նոր լուծումներ: Հաշվի առնելով որակական հարցազրույցների հետ կապված համակարգը, որն ուղեկցվում է թիրախային հարցադրումներով, կատարվել է տվյալների հավաքագրում և դասակարգում: Թեհրանի քաղաքապետարանի ենթակառուցվածքային նախագծերի փորձագետների հետ անցկացված 10 հարցազրույցների հիմքով կազմվել է 269 հարցման սկզբնական ծածկագիր: Ստացված տվյալների նախնական դասակարգումից հետո կողմնորոշումների, նպատակահարմարության և կառավարչական գործառնությունների բնույթի վրա հիմնված բաց կոդավորման հասկացությունները բաժանվել են 12 կատեգորիաների՝ հիմնված PMBOK ստանդարտով նախագծի վերահսկման սկզբունքների վրա:

Ատենախոսության երրորդ **«Նախագծերի կառավարման ռիսկերի գնահատումը Fuzzy Vikor մեթոդով»** գլխում կատարվել է մունիցիպալ նախագծերի ռիսկերի դասակարգում, որի հիման վրա ներկայացվել է ռիսկերի կանխարգելման կառավարչական գործառնությունների իրականացման շրջանակ: Ուսումնասիրությունները ցույց են տալ են տալիս, որ Թեհրանի քաղաքապետարանում նախագծերի իրագործման վերահսկման ու կառավարման ռիսկերի տասներկու մարտահրավերները գնահատվում և չափվում են 5 չափանիշներով: Մունիցիպալ նախագծերի կառավարման տեղեկատվական ապահովման նպատակով առաջարկվել է հաշվետվողականության համակարգ (տես գծապատկեր 2), հիմնված շահառուների հետադարձ կապի վրա: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախագծերի կառավարման հաշվետվողականությունը սահմանափակվում է պատվիրատու-Թեհրանի քաղաքապետարան շրջանակում, որը հնարավորություն չի տալիս ծրագրի իրագործմանը առնչվող մյուս շահառուներին տեղեկանալու կառավարչական միջանկյալ և վերջնական արդյունքների հետ: Իսկ նման տեղեկատվատվության հետադարձ կապով տրամադրման պարագայում շահառուները կարող են ներազդել

նախագծերի իրագործման կառավարչական որոշումների կայացման վրա՝ ելնելով ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր շահերի պահանջմունքներից:

Կարող ենք արձանագրել, որ ատենախոսությունում իրականացված ուսումնասիրությունները և ներկայացված առաջարկություններն ունեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն: Նախագծերի կառավարման ռիսկերի գործոնային շրջանակի հետազոտումը կարևոր նշանակություն ունի ընդհանուր առմամբ մունիցիպալ համակարգում ենթակառուցվածքների բարելավման և ընդլայնման որակական վերջնարդյունքների ձևավորման կառավարչական որոշումների կայացման համար:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունում դրականին առընթեր, կան նաև որոշակի թերություններ և բացթողումներ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Հետազոտության վերնագիրը կոնկրետ ընդգծում է Թեհրանի քաղաքապետարանի օրինակը, սակայն նախագծերի կառավարման ռիսկերի գնահատման հիմնախնդիրներ կան նաև Իրանի Իսլամական Հանրապետության այլ խոշոր քաղաքների քաղաքապետարաններում, որոնց ատենախոսը անդրադարձ չի կատարել: Ատենախոսությունը կշահեր, եթե նրանում ներկայացվեն կոկրետ հիմնավորումներ, թե ինչպես են Թեհրանի քաղաքապետարանում նախագծերի գնահատման և կառավարման ռիսկերը վերաբերում և նույնականացվում ԻԻՀ-ի այլ քաղաքներում իրականացվող մունիցիպալ նախագծերի հետ:
2. Ատենախոսության 15-րդ էջում ներկայացված աղյուսակ 1.1.1-ի թվային տվյալները ավարտվում են 2022 թվականով և նորացման կարիք ունեն: Ավելին, ներկայացված աղյուսակով բնավ վերլուծություններ և գնահատումներ չեն իրականացվել և այս առումով անհասկանալի են նրանում ընդգրկված տեղեկատվական ներկայացումները:

3. Հետազոտության 130-րդ էջում ներկայացված մունիցիպալ ծրագրերի կառավարման մոդելի հաշվետվողականության մասում հստակ չեն ձևակերպվել ծրագրի իրագործման շահառուների միջև հետադարձ կապուղիները: Ատենախոսությունը կշահեր, եթե նախագծերի իրագործման շահառուների շրջանում ներկայացվեր տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններ և հետադարձ կապի ապահովման միջոցներ, որոնք թույլ կտային առավել արդյունարար դարձնել մունիցիպալ ծրագրերի ռիսկերի կառավարման հաշվետվողականությունը:
4. Ատենախոսության 132-րդ էջում շահառուներին առնչվող կառավարչական հաշվետվության ձևավորման մոտեցումները, որոնք որ առնչվում են վերահսկողության իրականացմանը, շատ ընդհանրական են և ավելի շատ դեկլարատիվ բնույթ են կրում: Ատենախոսությունը կշահեր, եթե փորձագիտական առաջարկներին տրվեին կոնկրետ հիմնավորումներ:
5. Ատենախոսությունում բացակայում է մունիցիպալ ծրագրերի ռիսկերի կառավարման արդյունքների հաշվետվողականության ձևաչափ: Կարևոր ենք համարում ռիսկերի կառավարման վերջնարդյունքների տեղեկատվական համակարգումը և հատուկ հաշվետվության ներկայացումը, որով շահառուները կարող են առավել հիմնավոր ձևով իրականացնել ռիսկերի մեղմմանն ուղղված կառավարչական որոշումներ:
6. Ատենախոսության վերջին բաժնում հեղինակը կատարել է հետազոտական գործունեության ինքնավերլուծություն և որպես սահմանափակում է նշել ռիսկերի վարկանիշավորման DIMTEL մեթոդի կիրառման անհրաժեշտությունը, որը իր իսկ կողմից նկատի է առնվել որպես հետագա հետազոտական աշխատանքի բաղադրիչ: Սակայն կարծում ենք, որ եթե առկա էր ռիսկերի վարկանիշավորման այս մեթոդի կիրառման հնարավորությունը, ապա այն պետք է օգտագործվեր ատենախոսությունում, որը չի արվել:

7. Ատենախոսությունը կշահեր, եթե 129-րդ էջում ներկայացված մունիցիպալ նախագծերի ռիսկերի կառավարման մոդելում ավելացվեր ևս մեկ բլոկ, որը կառնչվեր մոտիվացիային: Եվ ստացվում է այնպես, որ առաջարկվում է առաջադեմ մոդել, և դրան չեն հաջորդում մոտիվացին գործիքների առաջադրումներ, որոնք հնարավորինս արդյունավետ կդարձնեին մոդելի աշխատանքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները չեն նվազեցնում հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը: Ռեզա Բարաթի թեկնածուական ատենախոսությունը ինքնուրույն և ամբողջական հետազոտություն է, որում դրված նպատակը և խնդիրների լուծումը կարևոր են ու արդիական:

Հետազոտության հիմնական արդյունքները հրատարակվել են հեղինակի գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները:

Ատենախոսը դրսևորել է բարձր մասնագիտական գիտելիքներ և վերլուծական ընդունակություններ, ինչի մասին վկայում է ինչպես ատենախոսությունը, այնպես էլ դրանում ստացված արդյունքները, իսկ մշակված առաջարկություններն ու կատարված եզրահանգումներն ունեն նաև տեսական և գործնական կիրառական նշանակություն:

Ռեզա Մոհամմադի Բարաթի «Ռիսկերի գնահատման հիմնախնդիրները նախագծերի կառավարման գործընթացում (Թեհրանի քաղաքապետարանի օրինակով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի

շնորհմանը՝ Ը 00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝



Թաթուլ Նորայրի Մանասերյան
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
«Այլընտրանք» գիտավերլուծական կենտրոնի ղեկավար

Պրոֆեսոր Թ. Մանասերյանի
ստորագրությունը հաստատում եմ՝



Իրինա Օհանյան

«Այլընտրանք» հետազոտական կենտրոնի գիտական քարտուղար՝